ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/54

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Մովսեսյան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին հանձնաժողովի որոշումը և պատվիրատուին պարտավորեցնել փոփոխել թիվ 3 արձանագրությունը՝ դրանից հանելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.04.2022թ.-ին:

Բողոքբեր քննող անձի 08.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6193-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 11.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

11.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/54 համարի ծածկագիրը:

20.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մովսեսյան» ՍՊԸ-ն 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հրապարակված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերում շրջանակում Մովսեսյան ՍՊԸ-ն 20.03.2022թ.-ին ներկայացրել է հայտ:

29.04.2022թ.-ին, ժամը 18:10-ին ստացված հեռախոզազանգից տեղեկացել ենք, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Մովսեսյան ՍՊԸ-ի ներկայացրած հայտում շտկում կատարելու վերաբերյալ:

Զանգահարողը հայտնել է, որ շտկման պահանջը ուղարկվել է 28.03.2022թ-ին, ինչի վերաբերյալ հայտնել ենք, որ շտկման պահանջ չի ստացվել, և խնդրել ենք, որպեսզի այն կրկին ներկայացվի համակարգի կամ ԷՓ միջոցով:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտնել է, որ ինքը այլևս չի կարող շտկման պահանջ ներկայացնել և առաջարկել հեռախոսով հայտնած տվյալների հիման վրա կատարել շտկումը:

Նույն օրը 29.03.2022թ.-ին ստացված հեռախոսազանգի հիման վրա ներկայացվել է շտկումը:

01.04.2022թ.-ին, armeps համակարգի միջոցով, ոչ ավտոմատ ծանուցմամբ ստացվել է հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը Մովսեսյան ՍՊԸ հայտում տեխնիկական բնութագիրը թերի լրացված լինելու հիմքով, Մովսեսյան ՍՊԸ հայտը մերժելու մասին:

Ելնելով այն իրողությունից, որ Մովսեսյան ՍՊԸ-ն չի ստացել օրենքով սահմանված կարգով ներկայացված շտկման պահանջ ոչ համակարգի, որ հրապարակված արձանագրությունների և ոչ էլ ԷՓ միջոցով, այլ այդ մասին տեղեկացել է հեռախոսազանգով, հետևաբար հանձնաժողովի կողմից տվյալ հիմքով Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը մերժելը ոչ իրավաչափ է:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-ին և 42-րդ կետերի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

2) իր և գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 20-րդ կետերի հիման վրա կատարվող գնումների: Գնահատող հանձնաժողովի այն անդամները, ովքեր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջոյդող աշխատանքային օրը:

Նշված նորմերի բովանդակությունից երևում է, որ մասնակցի կողմից անհամապատասխանության շտկման պարտավորությունը ի հայտ է գալիս միայն այն բանից հետո, երբ հանձնաժողովը այդ անհամապատասխանությունը հայտնաբերում է հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում, և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին, միաժամանակ հրապարակելով հանձնաժողովի արձանագրությունները տեղեկագրում:

Տվյալ դեպքում, հանձնաժողովը ոչ միայն չի հայտնաբերել անհամապատասխանություն հայտերի բացման և գնահատման նիստի օրը 21.03.2022թ.-ին, այլ նաև նույն օրը չի ծանուցել այդ մասին մասնակցին, տեղեկագրում չի հրապխարակել հանձնաժողովի այն արձանագրությունները, որոնք ենթակա էին հրապարակման:

Դեռ ավելին խախտելով օրենքի պահանջը, հայտերի գնահատումը ըստ էության իրականացրել է միայն 28.03.2022թ-ին, հայտերի բացումից 7 օր անց, իսկ արձանագրված անհամապատասխանության մասին մասնակցին հայտնել է հեռախոսազանգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովը խախտելով 526-Ն որոշման 43-րդ կետով նախատեսված պահանջները, չի կատարել արձանագրությունների հրապարակում տեղեկագրում, ինչի արդյունքում, անգամ հեռախոսազանգ ստանալուց հետո, Մովսեսյան ՍՊԸ-ն զրկված է եղել հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու, իր հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություն ունենալու, և հետևաբար շտկում կատարելու հնարավորությունից:

Ուսումնասիրելով հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, պարզ է դառնում, որ Մովսեսյան ՍՊԸ հայտը մերժվել է նախօրոք 28.03.2022թ.-ին, կայացված արձանագրությամբ 30.03.2022թ.-ին:

Տրամաբանական դատողությամբ առաջնորդվելով կարելի է հանգել միայն հետևյալ եզրահանգումներից որևէ մեկին. կամ 30.03.2022թ-ին Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 28.03.2022թ.-ին կազմված և ստորագրված արձանագրությունը վկայում է այն մասին, որ այդ որոշումը կայացվել է նախապես, կամ 28.03.2022թ. արձանագրությունը չի կազմվել 28.03.2022թ.-ին, այլ կազմվել է 30.03.2022թ.-ին, ինչից էլ հետևում է, որ 28.03.2022թ.-ին հանձնաժողովի կողմից չի կայացվել Մովսեսյան ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն արձանագրելու վերաբերյալ որոշում:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին հանձնաժողովի որոշումը և պատվիրատուին պարտավորեցնել փոփոխել թիվ 3 արձանագրությունը՝ դրանից հանելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 11.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6268-2022 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թթ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ չի ներկայացել հրավիրված նիստերին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.04.2022թ.-ին թիվ ՊՆ/02/1779-2022 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ԲՔԱ-ԱՕ/2/6268-2022 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3 ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներա կայացրել նաև «Մովսեսյան» ՍՊԸ-ն: 28.03.2022թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անահամապատասխանություններ: Մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված հավելված N 1.1-ում 18-րդ չափաբաժինը թերի է լրացված՝ բացակայում է Ընթացակարգի հրավերով սահմանված՝ առաջարկվող ապրանքի հատկանիշների նկարագրությունը և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատել վերջինիս կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Միաժամանակ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ և 49-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Նույն օրը նիստը կասեցվել է և գնումները համակարգողի կողմից armeps համակարգի ոչ ավտոմատ ցանուցմամբ (armeps համակարգից արտատպված տարբերակը կցվում է) մասնակցին առաջարկվել է սահմնված ժամկետում շտկել անհամապատասղանությունները:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն շտկումները ներկայացրել է, արդյունքում՝ 30.03.2022թ. տեղի ունեցած նիստի ընթացքում «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 25-րդ, 26-դ, 27-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ և 49-րդ չափաբաժինների մասով ներկայացված շտկումները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ 18-րդ չափաբաժնի մասով վերջինիս հայտը մերժվել է, քանի որ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը թերի է լրացված (շտկման արդյունքում մասնակիցը ներկայացրել է հայտով ներկայացված նույն տարբերակը)՝ բացակայում է Ընթացակարգի հրավերով սահմանված՝ առաջարկվող ապրանքի հատկանիշների նկարագրությունը և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատել

վերջինիս կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում նշում է, որ հեռախոսազանգի միջոցով է տեղեկացել, որ իրենից շտում է պահանջվել և խնդրել է, որ այն կրկին ներկայացվի համակարգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտնել է, որ այլևս չի կարող շտկման պահանջ ներկայացնել և առաջարկել է հեռախոսով հայտնած տվյալների հիման վրա կատարել շտկումը:

Այս մասով նշեմ, որ ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը;

Այսինքն, օրենսդիրը իմպերատիվ ձևով սահմանել է, որ մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրվելու օրը նիստը կասեցվում է և նույն օրն էլ մասնակիցը ծանուցվում է անհամապատասխանության մասին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից երկրորդ անգամ շտկման ծանուցում չի ներկայացվել: Իսկ ինչ վերաբերում նրան, որ քարտուղարն է առաջարկել հեռախոսով հայտնած տվյալների հիման վրա կատարել շտկում, դա այդպես չէ:

Քանի որ մասնակիցը հետաքրքրված էր շտկման բովանդակությունից, քարտուղարը բովանդակությանը ծանոթացրել է և հայտնել, որ armeps համակարգի ոչ ավտոմատ ցանուցմամբ 28.03.2022թ. ուղարկել է շտկման ցանուցումը և անհրաշեշտության դեպքում կարող է տրամադրել դրա արտատպված տարբերակը:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում նշում է, որ մասնակցի կողմից անհամապատասխանության շտկման պարտավորությունը ի հայտ է գալիս միայն այն բանից հետո, երբ հանձնաժողովը այդ անհամապատասխանությունը հայտնաբերում է հայտերի բացման և գնահատման արդյունքում և նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին, միաժամանակ հրապարակելով հանձնաժողովի արձանագրությունները տեղեկագրում:

Սույն մասով նշեմ, որ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը) ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է 28,03.2022թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անահամապատաս-խանություններ: Նույն օրն էլ գնումները համակարգողի կողմից armeps համակարգի ոչ ավտոմատ ցանուցմամբ մասնակցին առաջարկվել է սահմնված ժամկետում շտկել անհամապատասխանությունները: Այսինքն վերը նշված իրավանորմերի պահանջները գնահատող հանձնաժողովի և գնումները համակարգողի կողմից ամբողջությամբ պահպանվել են:

Ինչ վերաբերում է «Մովսեսյան» ՍՊԸ-ի այն մտքին, որ հանձնաժողովը ոչ միայն չի հայտնաբերել անհամապատասխանություն հայտերի բացման և գնահատման նիստի օրը՝ 21.03.2022թ-ին, այլ նաև նույն օրը չի ծանուցել այդ մասին մասնակցին, տեղեկագրում չի հրապարակել հանձնաժողովի այն արձանագրությունները, որոնք ենթակա էին հրապարակման, ապա այդ մասով նշեմ, որ Կարգի 32-րդ կետի 21~րդ ենթակետի համաձայն հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չաափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ

չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանությունն արձանագրվել է 28.03.2022թ. նույն օրն էլ շտկումը պահանջվել է, ուստի այն չէր կարող պահանջվել 21.03.2022թ. ինչպես նշում է բողոքաբերը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-֊րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Այսպիսով Ընթացակարգի հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է եղել սահմանված 21.03.2022թ., իսկ հայտերի բացման և գնահատման նիստն ավարտվել է 08.04.2022թ., որից հետո 09.04.2022թ. գնումները համակարգողի կողմից armeps համակարգի ավտոմատ ծանուցմամբ պայմանագիր կնքելու որոշումը հրապարակվել է, իսկ նիստերի արձանագրությունները armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկվել է Ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին: Նույն օրը՝ 09.04.2022թ. պայմանագիր կնքելու որոշումը, նիստերի արձանագրությունները, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը և մասնակիցների իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է տեղեկագրում:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն նշում է, որ զրկված է եղել հանձնաժողովի արձանագրություններին ծանոթանալու, իր հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություն ունենալու և հետևաբար շտկում կատարելու հնարավորությունից:

Ինչպես արդեն նշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների

նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սույն կարգավորմամբ չի նախատեսվում արձանագրության տրամադրում, այլ նախատեսվում է, որ հանձնաժողովի քարտուղարը անհամապատասխանությունն արձանագրվելու օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին, ինչն էլ 28.03.2022թ. armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկվել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին: Միաժամանակ, անհասկանալի է թե «Մովսեսյան» ՍՊԸ-ն՝ գրկված լինելով իր հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություն ունենալու և հետևաբար շտկում կատարելու հնարավորությունից, ինչպես է 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ և 49-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանությունները շտկել: Ինչ վերաբերվում է թիվ 3 արձանագրությանը, ապա հայտնեմ, որ նիստը նշանակվել և սկսվել է 28.03.2022թ., որի ընթացքում «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատաս-խանություններ, նիստը կասեցվել է, մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատաս-խանությունները և քանի որ անհապատասխանության շտկման համար մասնակցին տրվում է մեկ աշխատանքային օր, նիստը շարունակվել է 30.03.2022թ. և նույն օրն էլ «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 21.03.2022թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ՝ ներկայացրել «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

iii. Ընկերությունը Հավելված 1.1-ով, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես 18-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է՝ «Համակարգչային միկրոպրոցեսոր CORE I3-8100»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 18-րդ չափաբաժինը թերի է լրացված, բացակայում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված, ներկայացվող ապրանքի հատկանիշների նկարագրությունը, ինչպես նաև 25-ից 28-րդ, 33-րդ, 34-րդ և 49-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը:

v. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, 28.03.2022թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 28.03.2022թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի movsessian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ 30.03.2022թ.-ին շարունակելով նիստը, Հանձնաժողովը արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն կողմից 18-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը կրկին թերի է լրացված, ինչից ելնելով հնարավոր չէ գնահատել Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել:

viii. Բողոքներ քննող անձը 28.04.2022թ.-ին թիվ թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/9083-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել արդյո՞ք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Մովսեսյան» ՍՊԸ-ին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ: Եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա անհրաժեշտ է հայտնել, «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ:

ix. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.04.2022թ.-ի թիվ Ն/26-1/9119-2022 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Մովսեսյան» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցված movsessian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 28.03.2022թ.-ին ժամը 19:14-ին, 01.04.2022թ.-ին ժամը 15:30-ին և 11.04.2022թ.-ին ժամը 13:52-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղարձ նամակներ:

Ինչ վերաբերում է վորոնշյալ ծածկագրով ընթաակարգի ոչ ավտոմատ ծանուցումը մասնակցի կողմից ստանալուն, ապա հայտնել են, որ վերջինիս ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 2-րդ նեթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար

մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և

ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 11.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Մովսեսյան» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ով, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես 18-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է՝ «Համակարգչային միկրոպրոցեսոր CORE I3-8100»: Հանձնաժողովի 28.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 18-րդ չափաբաժինը թերի է լրացված, բացակայում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված, ներկայացվող ապրանքի հատկանիշների նկարագրությունը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 28.03.2022թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի movsessian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում: 30.03.2022թ.-ին շարունակելով նիստը, Հանձնաժողովը արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն կողմից 18-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը կրկին թերի է լրացված, ինչից ելնելով հնարավոր չէ գնահատել Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը 28.04.2022թ.-ին թիվ թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/9083-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել արդյո՞ք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակներում www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Մովսեսյան» ՍՊԸ-ին ուղարկվել են ծանուցումներ, թե՝ ոչ:

Եթե ծանուցումներն ուղարկվել են, ապա անհրաժեշտ է հայտնել, «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ծանուցումները ստացվել են, թե՝ ոչ: Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.04.2022թ.-ի թիվ Ն/26-1/9119-2022 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-1/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Մովսեսյան» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցված movsessian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 28.03.2022թ.-ին ժամը 19:14-ին, 01.04.2022թ.-ին ժամը 15:30-ին և 11.04.2022թ.-ին ժամը 13:52-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղարձ նամակներ: Ինչ վերաբերում է վորոնշյալ ծածկագրով ընթաակարգի ոչ ավտոմատ ծանուցումը մասնակցի կողմից ստանալուն, ապա հայտնել են, որ վերջինիս ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.04.2022թ.-ի թիվ Ն/26-1/9119-2022 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, Հանձնաժողովը պահպանել է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջները, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումը ուղարկվել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի՝ «Armeps» համակարգում գրանցված movsessian@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 28.03.2022թ.-ին, պահպանելով Կարգի 41-րդ կետի և հրավերի 8.9-րդ կետի դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ անհիմն են, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից 28.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 18-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտում անհամապատասխանություն արձանագրելու և այնուհետև մերժելու մասին որոշումն իրավաչափ չեն, որպիսի պայմաններում ներկայացված բողոքը ենթակա է մերժման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/54 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**